

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍԻ

Ք.Երևան  
Ժ.11.00

22 հոկտեմբերի 2010թ.

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 43 անդամներ:  
Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ս.Մարգարյանը:  
Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, վարչական շրջանների ղեկավարները:

Քաղաքապետի առաջին տեղակալ Ս.Մարգարյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2010 թվականի հոկտեմբերի 22-ի նիստի օրակարգը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Երևանի քաղաքապետի 2010 թվականի սեպտեմբերի 6-ի հ.4182-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:
3. Երևան քաղաքի սեփականությունը համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին /Անահիտ Եղիշեի Չարենց, Խորենացու փողոց, թիվ 69 շենք, բն. 8/:
4. Երևան քաղաքի սեփականությունը համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին /Ռոբերտ Գրիշայի Մլքեյան, Քանաքեռ 14-րդ փողոց, թիվ 38 շենք, բն.12/:
5. Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:
6. Վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մայիսի 7-ի հ.96-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
7. «Թիվ 5 բուժսանմաս» ՓԲԸ վերակազմակերպելու մասին:
8. Երևանի Մարշալ Բաղրամյան պողոտայի հ.78 հասցեում գտնվող վարչական շենքն անհատույց օգտագործման հանձնելու մասին:
9. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
10. Անվանի բանաստեղծ Գևորգ Էմինի հուշարձանի տեղադրման մասին:
11. Երևան քաղաքի վարչական շրջանների թաղային ներկայացուցիչների ձևավորման և գործունեության կարգը սահմանելու մասին:

Քաղաքապետի առաջին տեղակալ Ս.Մարգարյանի առաջարկությամբ 11-րդ հարցը հանվեց օրակարգից:

1. **ԼՍԵՑԻՆ** – Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի հոկտեմբերի 22-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1.Հաստատել Երևան քաղաքի ավագանու 2010թ. հոկտեմբերի 22-ի նիստի օրակարգը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**2. ԼՍԵՑԻՆ** – Երևանի քաղաքապետի 2010թ. սեպտեմբերի 6-ի հ.4182-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

**ՈՐՈՇՎԵՑ** – Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2010թ. սեպտեմբերի 6-ի «Քանաքեռ–Զեյթուն սան մաքրում» փակ բաժնետիրական ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին» հ.4182-Ա որոշմանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**3. ԼՍԵՑԻՆ** – Երևան քաղաքի սեփականությունը համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին /Անահիտ Եղիշեի Չարենց, Խորենացու փողոց, թիվ 69 շենք, բն.8/:

**ՈՐՈՇՎԵՑ** – Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան քաղաքի սեփականությունը համարվող Երևանի Խորենացու փողոցի թիվ 69 շենքի հ.8 մեկ սենյականոց բնակարանը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 02.07.2004թ. հ.1459714 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց /սվիրատվությամբ/ օտարել Եղիշե Չարենցի դուստր Անահիտ Եղիշեի Չարենցին /անձնագիր՝ AG0296855 տրված 20.05.2004թ. 002-ի կողմից/:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**4. ԼՍԵՑԻՆ** – Երևան քաղաքի սեփականությունը համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին /Ռոբերտ Գրիշայի Մլբեյան, Քանաքեռ 14-րդ փողոց, թիվ 38 շենք, բն.12/:

**ՈՐՈՇՎԵՑ** - Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան քաղաքի սեփականությունը համարվող Երևանի Քանաքեռ 14-րդ փողոցի թիվ 38 շենքի 3-րդ հարկի հ.12 երեք սենյականոց բնակարանը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման

03.09.2009թ. հ.2584303 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց /սվիրատվությամբ/ օտարել Ռոբերտ Գրիշայի Մլքեյանին /անձնագիր՝ AK0520414 տրված 01.06.2010թ. 012-ի կողմից/:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**5. ԼՍԵՑԻՆ** – Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

**ՈՐՈՇՎԵՑ** - Հայաստանի ժուռնալիստների միությանը /ՀՎՀՀ 02509992/ սեփականության իրավունքով պատկանող գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող Կենտրոն վարչական շրջանի Պուշկինի Յա հասցեում գտնվող և Հայաստանի կույրերի միավորում «Երևանի թիվ 3 ՈՒԱԶ» ՍՊ ընկերությանը /ՀՎՀՀ 00007687/ սեփականության իրավունքով պատկանող գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող Արաբկիր վարչական շրջանի Ն.Տիգրանյան 15-17 հասցեում գտնվող շինությունների մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ համապատասխանաբար 2455.8 հազար դրամ /ապառք՝ 1838.2 հազար դրամ, տույժ՝ 617.6 հազար դրամ/ և 1379.8 հազար դրամ /ապառք՝ 1007.5 հազար դրամ, տույժ՝ 372.3 հազար դրամ չափով/:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**6. ԼՍԵՑԻՆ** – Վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2010թ. մայիսի 7-ի հ.96-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

Քննարկվող հարցի վերաբերյալ պարզաբանումներ տվեց քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ.Առաքելյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1.«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ և 17-րդ հոդվածի 9-րդ կետերով նախատեսված Երևանի քաղաքապետի լիազորությունները պատվիրակել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին:

2. Երևան քաղաքի ավագանու 2010թ. մայիսի 7-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» հ.96-Ն որոշման 1-ին կետը «114-րդ» բառից հետո լրացնել «հոդվածով, 152.<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով,» բառերով:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**7. ԼՍԵՑԻՆ** – «Թիվ 5 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին:

Քննարկվող հարցի վերաբերյալ պարզաբանումներ տվեց քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Ա.Ուլիխանյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել «Թիվ 5 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերության միացման պայմանագրի, փոխանցման ակտի կազմման և հաստատման աշխատանքների, դրան համապատասխան «Թիվ 22 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի չափի և կանոնադրության մեջ համապատասխան փոփոխությունների և լրացումների կատարումը, ինչպես նաև «Թիվ 5 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերության գործունեության դադարման պետական գրանցման գործընթացի իրականացումը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**8. ԼՍԵՑԻՆ** – Երևանի Մարշալ Բաղրամյան պողոտայի հ.78 հասցեում գտնվող վարչական շենքն անհատույց օգտագործման հանձնելու մասին

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Երևանի Մարշալ Բաղրամյան պողոտայի հ.78 հասցեում գտնվող վարչական շենքի (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 05.03.2010թ. թիվ 2756249 վկայական) երրորդ անձանց օգտագործման իրավունքներով չծանրաբեռնված տարածքներն անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ վերջինիս հետ կնքելով վարչական շենքի անհատույց օգտագործման պայմանագիր: Ընկերության բյուջեի եկամտային մասն ապահովելու նպատակով պայմանագրում նախատեսել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության իրավունքն՝ իրեն անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով հանձնված վարչական շենքի տարածքներն՝ Երևանի քաղաքապետի համաձայնությամբ, այլ անձանց վարձակալության հանձնելու մասին:

2. Սահմանել, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության և երրորդ անձանց միջև Երևանի Մարշալ Բաղրամյան պողոտայի հ.78 հասցեում գտնվող վարչական շենքի տարածքների վերաբերյալ կնքված վարձակալության պայմանագրերի լուծման դեպքում ազատված տարածքները համարվում են փոխանցված «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով:

**9. ԼՍԵՑԻՆ** – Երևան քաղաքի ավագանու 2009թ. դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Քննարկվող հարցի վերաբերյալ պարզաբանումներ տվեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1.Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ» N 55-Ն որոշումը հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 3-րդ կետում «<Ծրագրի 4-րդ կետի>> բառերը փոխարինել «<Ծրագրի 4-րդ կետի և 36-րդ կետի 4-րդ ենթակետի>> բառերով:

2) 4-րդ կետում «<ն բնակելի տները>> բառերը փոխարինել «<, բնակելի տները և բնակելի տարածքները>>

3) 4-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<2) Հայաստանի Հանրապետության կառավարության, պետական այլ մարմինների կամ Երևանի քաղաքապետի կամ Երևանի թաղային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների և կարգադրությունների կամ պետական մասնակցությամբ ընկերությունների (պետական ձեռնարկությունների) կողմից տրամադրված օրդերների (այլ փաստաթղթերի) կամ սահմանված կարգով ուժի մեջ մտած դատարանի վճիռների հիման վրա մշտապես (փաստացի) բնակվում են դրանցում>>.

4) 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով.

<<3) վերաբնակեցվել են վթարային քանդման ենթակա շենքերից և նորակառույց շենքի բնակարանները տիրապետում և օգտագործում են վարձակալության իրավունքով.

4) բազմազավակ են, ունեն 6 և ավելի երեխաներ, չունեն սեփական բնակարան կամ ունեն բնակապայմանների բարելավման կարիք.

5) հանրապետության մշակութային և տնտեսական զարգացման բնագավառում մեծ ներդրում ունենող արվեստի, մշակույթի և այլ ոլորտների ականավոր գործիչներ են, որոնք (նրանց ընտանիքների անդամները) չունեն սեփական բնակարան կամ ունեն բնակապայմանների բարելավման կարիք>>:

5) Ծրագիրը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1.-րդ կետով.

<<4.1. Սույն ծրագրի իմաստով 4-րդ կետում նշված «բնակապայմանների բարելավման կարիք» ունեցող է համարվում այն անձը (անձինք) կամ ընտանիքը, որոնց ընդհանուր համատեղ կամ բաժնային սեփականություն հանդիսացող բնակելի տնում կամ բնակարանում կամ այլ բնակելի տարածքում մեկ անձին հասանելիք բնակելի տարածքի բաժնեմասը չի գերազանցում 9.0 քառ. մետր մակերեսը և իրենք կամ իրենց հետ համատեղ բնակվող անձինք (ծնողները, ամուսինը և երեխաները) վերջին հինգ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում չեն օտարել բնակելի տուն կամ բնակարան կամ այլ բնակելի տարածք>>:

6) 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ ենթակետով.

<<3) այն անձանց, որոնք փաստացի տիրապետում և օգտագործում են իրենց բնակարաններին անմիջապես կից ոչ բնակելի տարածքները, որոնց մուտքերը բացառապես բնակարաններից են և դրանք այլ մուտք չունեն>>:

7) 14-րդ կետի 4-րդ ենթակետից հանել <<վճարման կարգի>> բառերը:

8) 19-րդ կետից հանել <<Օրագրի 16-րդ կետում նշված որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում>> բառերը:

9) 28-րդ կետի 4-րդ ենթակետում <<և բնակելի տներ>> բառերը փոխարինել <<բնակելի տներ և բնակելի տարածքներ>>

10) 31-րդ կետը <<աճուրդի>> բառից հետո լրացնել <<կամ մրցույթի>> բառերը:

11) 34-րդ կետը <<աճուրդով>> բառից հետո լրացնել <<կամ մրցույթով>> բառերով, իսկ <<մեկնարկային>> բառից հետո լրացնել <<(նվազագույն)>> բառով:

12) 36-րդ կետի 4-րդ ենթակետը <<հանձնվել>> բառից հետո լրացնել <<Երևանի քաղաքապետի որոշմամբ>> բառերով:

13) 38-րդ կետը <<Աճուրդով>> բառից հետո լրացնել <<և մրցույթով>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**10. ԼՍԵՅԻՆ** – Անվանի բանաստեղծ Գևորգ Էմինի հուշարձանի տեղադրման մասին:

**ՈՐՈՇՎԵՑ** – Տալ համաձայնություն ՀՀ անվանի բանաստեղծ Գևորգ Էմինի հուշարձանը Երևանի Սիրահարների այգում տեղադրելու համար:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Տ.Մարգարյանը Երևանի ավագանու անդամներին առաջարկեց Երևանի ավագանու հաջորդ նիստը գումարել 2010 թվականի նոյեմբերի 26-ին ժամը 11.00-ին:

Առաջարկն ընդունվեց միաձայն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ**  
**ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Արձանագրեց՝  
Լ.Ալոյան